չիւր ըստ հաճոյից իւրոց ետուն պատասխանի, և 'ի վերջոյ եհարց ցայլազգի դռնապանս, և նոքա ասեն, յետ տօնի արմաւենեաց, յորում գնան այլազգիք յուխտ 'ի գերեզման Մովսէսի, զի յերեկոյի շաբաթուն եկեալ կանգնին Յոյնք, Հայք, Գալթիք, Հապէշք և Ասորիք առ գմբեթի Գերեզմանին, և աղդ առնեն Պատրիարքին Հայոց առաքել զմի ոք և կոչել զտեսուչն Հապեշաց, զի նոցա է սեփհական վառել զլոյսն, զի հետեւակ են Հայոց, եւ եթէ ոչ եկեսցեն նոքա, ոչ վառի լոյսն։ Յայսպիսի երկար եւ տարաղարտ քննութիւնս չեղեւ նպատաստ ինչ Հայոց, այլ հաստատեցին զրանս Յունաց, ակն ածեալ 'ի կուսակալէն Դամասկոսի։ Սակայն հանին հրաման 'ի բաց առնուլ ըզզէնս 'ի Յունաց, և 'ի չափու պահել զխստութիւնս նոցա. և չթողուլ մտանել 'ի քաղաքն զինուք։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկն յուխտ յԵրուսաղէմ Բաղիշեցի Աւետիք անուամբ ոմն, որ էր հանդերձապետ (Քիւրմի պաշի) կիւչիւք Ահմէտ Գաբուտան Փաշայի, որ եկեալ էր յայնժամ 'ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի 'ի վերայ ապստամբեալ առն, որում անուն էր Ման օղլու։ Սա ինքն Աւետիք տեսեալ զչփոթութիւնս Յունաց, չոքաւ վաղվաղակի առ Ահմէտ Փաշայն և ծանոյց նմա զամենայն անցս Երուսաղէմի. և նա փութանակի առաքեաց զարս առ Բդեշխն Դամասկոսի, և աղդ արար նմա սանձել զստահակութիւնս Յունաց և պաշտպան լինիլ Հայոց. և նա յղեաց զմին 'ի հաղարապետաց դնդաւ իւրով, որոյ եկեալ յԵրուսաղէմ խօսեցաւ ընդ քաղաքապետին, և մատոյց զդիր կուսակալին առ դատաւորն. եւ նա ընթերցաւ 'ի ժողովի, որ ունէր օրինակ զայս։ «Արդ որոշեցաւ՝ զի տօնեսցեն Հայք յայսմ ամի զՋատիկն իւրեանց 'ի 23 Շէվվալ ամսոյ, յորում պատահի ուխտադնացութիւն այլազգեաց 'ի գերեզմանն Մովսիսի. իսկ Յոյնք որք զհետ մնեալ Լատին շաբաթաւ միով յառաջ տօնել, խոտորեալ են 'ի կանոնէ և 'ի նախնի սովորութենէ։ Գրեալ 'ի 17 Շէվվալ ամսոյ։

Իսկ հաղարապետն եկեալ եկաց 'ի դուռն Ս. Գերեզմանին 'ի նախընթաց աւուր Զատկին Յունաց, և 'ի բաց վանեալ անտի զնոսա փակեաց զդուռն և կնքեաց, և ոչ ետ թոյլ մտանելումն 'ի ներքս, և ապա յետ միոյ շա-